

(Եւ) զիս զտառապեալ... Ղուկասս, որ կամ ի կաճառ վերոյգրեալ հարցս եւ եղբարցս իբրեւ սկի լայն ի ջուրս խաշանց եւ որպէս զթխատեսակ զագուաւս ի պարս աղաւնեաց: Քանզի եւ ես տրուաւ եղէ խուն ինչ պատճառ գրութեան քերթողական տառիս հրամանաւ սրբազան հայրապետիս մերոյ...:

«Եւ զարձեալ կրկին անգամ աղաչեմ զձեզ, ով սուրբ ընթերցողք, զի յիշման արժանի առնէք առաջի Քրիստոսի սուրբ եւ մաքուր աղաւթիւք ձեր գմխաբանք սուրբ ուխտիս Յռհանավանից, որ է այժմ դպրանոց, որպէս կանխաւ ճառեցաք: Քանզի աստ առ դրան սուրբ Կարապետիս գրեցաւ եւ սրբագրեցաւ եւ ծաղկեցաւ եւ կազմեցաւ իմաստապատում տառս այս ի մէջ բաղմահոյլ եղբարցս: Եւ արդ յիշեցէք զժերուցի տէր Բարսեղն, որ է հայր եւ խնամածու մանկանցս եւ գտէր Պետրոսն համախոհ նմին եւ զՍիմէոն զաւագ սարկաւագն՝ զծաղկող գրոցս, եւ զՍտեփանոս քահանայն, որ մեծաւ աշխատութեամբ գրեաց զսայ ի վայելունն ուսումնասէր մանկանց եւ զՄարտիրոս ջահընկալն, որ աշխատեցաւ ի սրբագրելն եւ ի վերջ գրոցս է տետր գրեաց. այլ եւ զմիւս Մարտիրոսն ընթերցող, որ կուկեաց զթուղթն, եւ զայլ համախոհ եղբարքս արժանի առէք յիշման...»:

Բացի յիշեալ Մենաստաններէ եւ Դպրատուններէ, որոնք այրերու համար սահմանուած էին, Մովսէս կաթողիկոս ուրիշ երեք վանք ալ հիմնարկեց կուսանաց համար: Այս